««ՆՈՐՔ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ և ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՆՄԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-23/14

ք. Երևան «14» մայիս 2023թ.

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, ի դեմս Գործադիր տնօրեն՝ Ա. Պարզյանի, ով գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մարիամ Պետրոսյան Խաչատուրի» Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն՝ Մ. Պետրոսյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 10,000,000.00 (տաս միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև հանձման-ընդունման արձանագրությունների երկկողմ հաստատման տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Պայմանագիրը կնքվում է առավելագույն գնով եւ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում Պատվիրատուն վճարումը կատարում է իրեն փաստացի մատուցած ծառայության դիմաց՝ հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, իսկ մինչև ֆինանսական միջեցներ նախատեսվելու տարվա դեկտեմբերի 30-ը պահանջ չներկայացվելու դեպքում՝ չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվելու է, առանց որևէ իրավական պարտավորության:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1

կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում: Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի

փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ	«Մարիամ Պետրոսյան Խաչատուրի» Ա/Ձ
ՀՀ, ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68	ՀՀ, Վարչական շրջան Պռոշյան
«Արդշինբանկ» ՓԲԸ	Անդրանիկի փ"/2/5/17
Հ/Հ 2480102656710000	«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02602449	Հ/Հ 2052332183587001
	ՀՎՀՀ 43199619
Գործադիր տնօրեն՝_____Ա. Պարզյան	տնօրեն _____Մ. Պետրոսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«_____» _____ 2023թ. կնքված
ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-23/14 *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության								
հ/հ	միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը)	հ/մ	ընդհանուր քանակը	ընդհանուր առավելագույն գինը/ՀՀ դրամ	մատուցման	
							հասցեն	Ժամկետը**
1	98341140/501	Շենքի պահպանման ծառայություններ	Շեքի պահպանման ծառայություններ /համաձայն կից ներկայացված ցուցակի/: Ծառայության մատուցման համար անհրաժեշտ բոլոր նյութերի, սարքավորումների և ապրանքների մատակարարումը ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի վարչական շենք, ինչպես նաև կատարված աշխատանքից առաջացած աղբի թափոնների հեռացումը վարչական շենքից՝ իրականացվում է կատարողի կողմից:	դրամ	1	10000000	ՀՀ, ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68	Պայմանագիրը կնքվելու է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվելու է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հիման վրա՝ մինչև 2023 թվականի դեկտեմբերի 20-ը՝ ըստ պատվիրատուի պահանջի

***Ընթացակարգն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվելու է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:** Ծառայության մատուցման ժամկետը, իսկ փուլային մատուցման դեպքում՝ առաջին փուլի մատուցման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում: Մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան ֆինանսական միջոցներ նախատեսվելու տարվա դեկտեմբերի 30-ը:
****Ծառայությունները պետք է մատուցվեն համաձայն Հավելված 1.1-ով սահմանված գնացուցակի:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
««Նորք» սոցիալական ծառայությունների
տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն»
հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2480102656710000
ՀՎՀՀ 02602449

Գործադիր տնօրեն՝_____Ա. Պարզյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Մարիամ Պետրոսյան Խաչատուրի» Ա/Ձ
ՀՀ, Վարչական շրջան Պռոշյան
Անդրանիկի փ"/շ/5/17
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2052332183587001
ՀՎՀՀ 43199619

տնօրեն _____Մ. Պետրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
«_____» _____ 2023թ. կնքված
ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-23/14 ծածկագրով պայմանագրի

ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ ԸՍՏ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՏՈՂԵՐԻ /ԳՆԱՑՈՒՑԱԿ/*

N	ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ	Չ/Մ	ՄԻԱՎՈՐԻ ԱՐԺԵՔ ՀՀ ԴՐԱՄ		
			Աշխ. արժեք	Նյութի արժեք	Միավորի ընդ. արժեք
	Քանդման և ապամոնտաժման աշխատանքներ				
1	Լամինատե հատակի ապամոնտաժում	մ^2	200	[redacted]	200
2	Շրիշակների ապամոնտաժում, Մ.Դ.Ֆ-ից	գ/մ	100	[redacted]	100
3	Շրիշակների ապամոնտաժում, պլաստասե	գ/մ	80	[redacted]	80
4	Պատերից հին ներկի հեռացում	մ^2	100	[redacted]	100
5	Պատերից հին ծեփի մասնակի հեռացում	մ^2	300	[redacted]	300
6	Վարդակների և անջատիչների ապամոնտաժում	հատ	500	[redacted]	500
7	Առաստաղից հին ներկի հեռացում	մ^2	200	[redacted]	200
8	Առաստաղից հին ծեփի մասնակի հեռացում	մ^2	500	[redacted]	500
9	Լուսավորության լամպերի և լուսամփոփների ապամոնտաժում	հատ	200	[redacted]	200
10	Օդափոխության ճաղավանդակների ապամոնտաժում	հատ	500	[redacted]	500
11	Ջեռուցման մարտկոցների ապամոնտաժում	հատ	500	[redacted]	500
12	Split տեսակի օդորակիչների ապամոնտաժում	հատ	4000	[redacted]	4000
13	Լուսամուտային տեսակի օդորակիչների ապամոնտաժում	հատ	5000	[redacted]	5000
14	Հատակի ցեմենտ-ավազե հին մինչև 50մմ հարթեցնող շերտի քանդում	մ^2	1000	[redacted]	1000
15	Ասֆալտ-բետոնյա շերտի քանդում	մ^2	1200	[redacted]	1200
16	Ծածկի պանելներում անցքերի բացում	մ^3	500	[redacted]	500
17	Միջսենյակային պատերում անցքերի բացում	մ^3	200	[redacted]	200
18	Փայտա դռների ապամոնտաժում	հատ	10000	[redacted]	10000

19	Պատուհանների ճաղավանդակների ապամոնտաժում, 2-րդ հարկի բարձրության վրա	հատ	7000	[redacted]	7000
20	Աստիճանների բետոնյա հարթակի ապամոնտաժում	մ³	2000	[redacted]	2000
	Շինարարական աշխատանքներ				
	Առաստաղներ				
1	Առաստաղի մածկում, հղկում և ներկում ջրի վրա հիմնված ներկով	մ²	4000	1500	5500
2	Կախովի առաստաղի տեղադրում	մ²	1000	3000	4000
3	Գիպսաստվարաթղթե առաստաղի իրականացում	մ²	3000	3000	6000
	Պատեր				
1	Պատերի սվաղում մինչև 10 մմ-ոց փարոսների վրա, գաջով	մ²	3000	1000	4000
2	Պատերի մածկում, հղկում և ներկում ջրի վրա հիմնված ներկով	մ²	3000	1500	4500
3	Շին անկյունակների տեղադրում	գ/մ	500	500	1000
4	Օդափոխության ճաղավանդակների տեղադրում	հատ	1000	1000	2000
5	Օդորակիչների ապամոնտաժում և տեղադրում	հատ	10000	10000	20000
6	Ջեռուցման մարտկոցների յուղաներկում	հատ	5000	7000	12000
7	Ջեռուցման մարտկոցների տեղադրում	հատ	1000	5000	6000
8	Ջեռուցման խողովակների յուղաներկում	գ/մ	1000	1000	2000
9	Դռների եւ պատուհանների թեքությունների սվաղ ծեփամածիկով	մ²	3000	2000	5000
10	Ակուստիկ պանելների տեղադրում	մ²	2000	10000	12000
11	Կաֆելի սալիկների տեղադրում	մ²	8000	8000	16000
	Հատակներ				
1	Հատակի փարոսների տեղադրում 10մմ-ոց հարթ.շերտի համար	գ/մ	200	300	500
2	Հատակի ցեմենտ-ավազե շերտի տեղադրում մինչեւ 50մմ հաստությամբ	մ²	2000	1000	3000
3	Լամինատե հատակի տեղադրում (սպունգով), AC3 ոչ ցածր դասի	մ²	3000	7000	10000
4	Հատակի գորգապատում ուղղանկյունաձև գորգասալիկներով	մ²	3000	4000	7000
5	Կվարց-վինիլային SPC հատակի տեղադրում	մ²	4000	14000	18000
6	Լինոլեումի տեղադրում, հաստությունը ոչ պակաս քան 0,7մմ	մ²	2000	3000	5000
7	600x600մմ չափսի կերամագրանիտե սալիկների տեղադրում	մ²	4000	10000	14000
8	300x300մմ չափսի կերամագրանիտե սալիկների տեղադրում	մ²	4000	8000	12000
9	300x300մմ չափսի մետլախե սալիկների տեղադրում	մ²	3000	8000	11000

10	ՄԴՖ-ից շրիշակների տեղադրում	գ/մ	1000	500	1500
11	Պլասմասե շրիշակների տեղադրում	գ/մ	1000	500	1500
12	Մետաղական շեմերի տեղադրում	գ/մ	3000	2000	5000
	էլեկտրականություն				
1	Վարդակների եւ անջատիչների տեղադրում, "Տիտան" ընկերության արտադրության կամ համարժեք	հատ	1000	2000	3000
2	Առաստաղի վրա մոնտաժվող արտաքին լուսատուների տեղադրում, 30-50W 4000K, ուղղանկյունաձև	հատ	500	2000	2500
3	Առաստաղի վրա մոնտաժվող արտաքին լուսատուների տեղադրում, 30-50W 4000K, քառակուսի	հատ	500	2000	2500
4	Առաստաղի վրա մոնտաժվող արտաքին լուսատուների տեղադրում, 50-80W 4000K, ուղղանկյունաձև	հատ	500	3000	3500
5	Առաստաղի վրա մոնտաժվող արտաքին լուսատուների տեղադրում, 30-50W 4000K, քառակուսի	հատ	500	2000	2500
6	Ռելսային լեդ լուսատուների տեղադրում	հատ	5000	100000	105000
7	Լեդ լուսատուների տեղադրում	հատ	1000	10000	11000
8	Պղնձյա լարերի համար փոսորակների փորում	գ/մ	1000	500	1500
9	1.5x2 մմ^2 պղնձյա լարերի ներքին մոնտաժում	գ/մ	500	1250	1750
10	2.5x2 մմ^2 պղնձյա լարերի ներքին մոնտաժում	գ/մ	500	1750	2250
11	4.0x2 մմ^2 պղնձյա լարերի ներքին մոնտաժում	գ/մ	500	2000	2500
12	1.5x2 մմ^2 պղնձյա լարերի արտաքին մոնտաժում	գ/մ	500	1250	1750
13	2.5x2 մմ^2 պղնձյա լարերի արտաքին մոնտաժում	գ/մ	500	1750	2250
14	4.0x2 մմ^2 պղնձյա լարերի արտաքին մոնտաժում	գ/մ	500	2000	2500
15	Մետաղական Մալուխատարի տեղադրում 100x50մմ	գ/մ	2000	1000	3000
16	Մետաղական Մալուխատարի տեղադրում 200x50մմ	գ/մ	3000	1250	4250
17	Մետաղական Մալուխատարի տեղադրում 300x50մմ	գ/մ	3500	1500	5000
18	Մետաղական Մալուխատարի տեղադրում 400x50մմ	գ/մ	4000	1750	5750
19	Մետաղական Մալուխատարի տեղադրում 500x50մմ	գ/մ	4500	2000	6500
20	Մետաղական Մալուխատարի տեղադրում 600x50մմ	գ/մ	5000	2250	7250

	Ջրամատակարարում և ջրահեռացում				
1	Զուգարանակոնքի տեղադրում	հատ	10000	90000	100000
2	Լվացարանի տեղադրում	հատ	10000	70000	80000
3	Ներկառուցվող զուգարանակոնքի տեղադրում	հատ	10000	150000	160000
4	Ներկառուցվող լվացարանի տեղադրում	հատ	20000	200000	220000
5	Կոյուղու խողովակների փոխարինում	գ/մ	7000	8000	15000
6	Կոյուղու դիտահորի վերանորոգում	հատ	1000	1000	2000
7	Խմելու ջրի դիտահորի վերանորոգում	հատ	5000	15000	20000
8	Ջրի պլաստմասե խողովակների մոնտաժ	գ/մ	7000	5000	12000
9	Ծորակների տեղադրում	հատ	10000	50000	60000
10	Սանտեխնիկական սարքերի ապամոնտաժում	հատ	5000		5000
	Այլ աշխատանքներ				
1	Պատուհանագոգի փոխարինում (պլաստիկ)	հատ	1000	1000	2000
2	Ծածկի պանելների անցքերի բետոնապատում	մ^3	2000	1500	3500
3	Պատի անցքերի փակում ցեմենտավազե շաղախով	մ^2	2000	1500	3500
4	Խրամուղիներում ավազե հարթեցման շերտի պատրաստում	մ^3	2000	1500	3500
5	Խրամուղիների հետլիցք	մ^3	2000	1500	3500
6	Խրամուղիների ասֆալտ-բետոնյա շերտի տեղադրում	մ^2	1000	1000	2000
7	Շին աղբի բարձում եւ դուրս բերում շենքից	տոննա	1000		1000
8	Մ.Դ.Ֆ.-ից պատրաստված նոր դռների տեղադրում	հատ	15000	150000	165000
9	Փայտե դռների ներկում	մ^2	1000	1000	2000
10	Փայտե դռան փականների տեղադրում	հատ	5000	10000	15000
11	Դռան բացվածքներում թեքությունների սվաղ գաջով	մ^2	5000	2000	7000
12	Փայտե միջնորմի տեղադրում	մ^2	5000	35000	40000
13	Մենտաղյա սյուների բետոնյա հիմքերի քանդում	մ^3	5000		5000
14	Հայելիների տեղադրում	հատ	1000	50000	51000
15	Աստիճան հարթակի մոնտաժ (թիթեղից 10 մմ հաստությամբ)	տոննա	25000	25000	50000
16	Աստիճանի եզրերի ճաղերի պատրաստում մետաղյա պրոֆիլներից	տոննա	25000	25000	50000
17	Հենապատի ցեմենտավազե սվաղ	մ^2	4000	2000	6000

18	Մետաղապլաստե լուսամուտների 350x460մմ չափսի օդորակիչի անցքի փակում երկշերտ ապակու տեղադրման եղանակով	հատ	**1000**	**1000**	**2000**
19	Մինչև 10քմ տարածքի ասֆալտապատում	$մ^2$	**2000**	**4000**	**6000**
Ընդամենը՝ ըստ սյուների			**334,780**	**1,156,050**	**1,490,830**
Ընդամենը միավոր գների հանրագումար՝			**1,490,830**		

Ծանոթություն. Սևացրած դաշտերը չեն լրացվում:

*Կազմակերպությունը պետք է ունենա վերնշյալ գնացուցակում նշված գործողություններից մի քանիսը միաժամանակ կատարելու հնարավորություն:

**Ցանկում նշված ցանկացած նյութի գույնն ու տեսակը նախապես պետք է համաձայնեցվի Պատվիրատուի հետ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

««Նորք» սոցիալական ծառայությունների
տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն»
հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2480102656710000
ՀՎՀՀ 02602449

Գործադիր տնօրեն՝ _____Ա. Պարզյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Մարիամ Պետրոսյան Խաչատուրի» Ա/Ձ
ՀՀ, Վարչական շրջան Պռոշյան
Անդրանիկի փ"/շ/5/17
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2052332183587001
ՀՎՀՀ 43199619

տնօրեն _____Ս. Պետրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«_____» _____ 2023թ. կնքված
ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-23/14 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/Հ	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման	Ծառայության անվանումը	Չ/մ	Ընդհանուր քանակը	Վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝												
					I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Ընդհանուր գինը
1	98341140/501	Շենքի պահպանման ծառայություններ	դրամ	1	-	-	-	6000000	10000000	10000000	10000000	10000000	10000000	10000000	10000000	10000000	10000000
Ընդհամենը՝																	**10000000**

*Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի հրապարակած, փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:

Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա:

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով և հրավերում ներկայացվելու են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվելու է կոնկրետ գումարի չափ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
««Նորք» սոցիալական ծառայությունների
տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն»
հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2480102656710000
ՀՎՀՀ 02602449

Գործադիր տնօրեն՝ _____Ա. Պարզյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Մարիամ Պետրոսյան Խաչատուրի» Ա/Ձ
ՀՀ, Վարչական շրջան Պռոշյան
Անդրանիկի փ"/շ/5/17
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2052332183587001
ՀՎՀՀ 43199619

տնօրեն _____Մ. Պետրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«____» _____ 2023թ. կնքված
ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-23/14 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«____» _____ 2023թ. կնքված
ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-23/14 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն